Կարգապահական գործ թիվ ԿԳ-16053

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 235-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № ԿԳ/157-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1187) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

02.03.2016թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատո**(այսուհետ՝ Պալատ)** մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև Դատարան)** դատավոր Նելլի Բաղդասարյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 26.02.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. փետրվարի 26-ին, ժամը 16.30-ին նշանակված դատական նիստին, ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան Տիգրան Եգորյանը իր դատավարական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, չի ենթարկվել նախագահող դատավորի օրինական կարգադրություններին, ինչով խոչընդոտել է և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ: Որոշմամբ նշվել է, որ պաշտպան Տ. Եգորյանը դատական նիստի ընթացքում հեգնական տոնով դիմելով նիստը

նախագահողին՝ նշել է. «Դուք ստում եք», «ես Ձեր խնդրանքին չեմ արձագանքում»: Համաձայն որոշման՝ նիստը նախագահողը հորդորել և խնդրել է տեղից չխոսել, ինչին ի պատասխան պաշտպան Տ. Եգորյանը նշել է. «Ձեր խնդրանքը չի բավարարվում»: Նախագահողը զգուշացրել է, որ դատական նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու համար իրավասու է որոշում կայացնել սանկցիա կիրառելու մասին, սակայն Տ. Եգորյանը հայտնել է «դատարանի որոշման կարիքը չունենք», «մենք գնանք, թե մնանք», «հը՞ը՞, լսեք, Ձեզ պաշտպանական կողմը անհրաժեշտ է», «էս կողմում լսվու՞մա, Դուք լսու՞մ եք մեզ, Դուք տեսնու՞մ եք մեզ», «ադեկվատ ընկալեք իրականությունը»:Դատարանը հայտնել է, որ վերոնշյալ արտահայտությունների ժամանակ Տ. Եգորյանը աջ ձեռքը բարձրացնելով վեր, անկանոն շարժումներ է արել: Որոշմամբ նշվել է, որ նման վարքագիծ դրսևորելուց հետո դատարանը պաշտպան Տ. Եգորյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված սանկցիա՝ «նախազգուշացում», միաժամանակ նրան բացատրել, որ դատական նիստի կարգը կրկին խախտելու և նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելու կամ նախագահողի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել ավելի խիստ սանկցիա: Սակայն, պաշտպան Տ. Եգորյանը՝ շարունակելով նույն վարքագիծը, դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, կրկին նույնաբնույթ հեգնական արտահայտություններով և ձեռքի անկանոն շարժումներով դիմել է նիստը նախագահողին, շարունակելով խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքը:

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, 313-րդ հոդվածի, 314-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ դատավորի օրինական կարգադրությունները չկատարելը, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելը և դրանով իսկ դատավարական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում է, որի պատճառով ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան՝ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված սանկցիան՝ նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ, ինչը նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտադիր հիմք է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատարանը 26.02.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Տիգրան Եգորյանին /արտոնագիր N 1187/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Դատարանի որոշումը 09.03.2016թ. թիվ 85-Ա/ԿԳ-16053 որոշմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջի խախտման հատկանիշով:

3.Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան՝ Մարինե Թովմասյանին: Վերջինս հավաքագրելով տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրելով դրանք կազմել է եզրակացություն.

<Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար: Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ (երբեմն իրար հակասող)՝ - վստահորդի նկատմամբ; - դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից; - իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես; - հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:

Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված են պաշտպանի իրավունքներն և պարտականությունները, որում ամրագրված է.

<<Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝ հայտնել բացարկներ. հարուցել միջնորդություններ. առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ. **<u>Պաշտպանը պարտավոր է՝</u>** ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.դատական նիստում պահպանել կարգուկանոն>>:

4. <u>Դիմողի և պատասխանողի դիրքորոշումը կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ</u>

Ներկայացված եզրակացության կապակցությամբ կողմերը որևէ դիրքորոշում չեն հայտնել:

02.05.2016թ-ին թիվ 85-Ա/ԿԳ-16053 կարգապահական գործը հանձնվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ՝ Կարապետ Աղաջանյանին :

<u>5. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները</u>

- Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում դիմողը բացատրություններ չի տվել և կարգապահական գործի քննությանը՝ Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել :

<u>6.Պատասխանողի բացատրությունները</u>

- Պատասխանողը կարգապահական գործի քննության ընթացքում ներկայացրեց գրավոր բացատրություն, որով ըստ էության հայտնց, որ

<26.02.2016թ. դատական նիստի ժամանակ Նելլի Բաղդասարյանը ի սկզբանե սկսեց անհարկի և անպատճառ մի գործընթաց, և ահվածք որի արդյունքում կարծում ենք դատարանների նկատմամբ վստահությունը և դատարանների հեղինակությունը մի քանի մղոնով հետ շպրտվեց: Նելի Բաղդասարյանի գործողությունների արդյունքում այնպիսի վիճակ էր ստեղծել, որ վերջինս շատ դեպքերում կորցնում էր ինքնատիրապետումը, իրադարձությունների ադեկվատ

ընկալումը, բնականաբար տապալելով իր վրա դրված նախագահող դատավորի բոլոր պարտականությունները խախտելով թե դատավորների վարքագծի կանոնները թե ՀՀ սահմանադրությունն ու օրենքները թե Կոնվենցիամ և թե հասրակ տրամաբանությունը:

Անդրադառնալով դատարանի որոշմանն անհրաժեշտ եմ համարում առանձնացնել հետևյալը՝ Ն.Բաղդասարյանն իր որոշման հիմքում դրել է իմ կողմից կատարված «……» արտահայտությունները, որոնք դիտարկել է վիրավորական, սակայն որքան էլ, որ դրանք առանձին վերցված, կոնտեքստից կտրված վիրավորական և անթույլատրելի թվան իրականում կոնկրետ նիստի շրջանակներում, կոնկրետ կոնտեքստում և Ն.Բաղդասարյանի վարքագծի, գործողությունների կապակցությամբ բավական ադեկվատ հայտարարություններ և/կամ հարցադրումներ են եղել: Հետևաբար առաջարկում եմ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման մեջ նշված արտահայտությունները դիտարկել կոնտեքստում: Ավելին դրանք դատավորի կողմից երևի առավել վիրավորական ներկայացնելու նպատակով, նաև ձևախեղվել էին, օրինակ », «ադեկվատ ընկալեք իրականությունը» արտահայտությունը կատարվել էր այլ բառերի համադրությամբ՝ Երբ դատավորը դիմել էր դատախազին ասելով. « Պարոն ….. ինչ կարծիքի եք վերաբերմունքի հետ կապված», Ես հաշվի առնելով այն, որ դատավորն իրավասու չի դատախազից կարծիք հարցնելու կոնկրետ սանկցիա կիրառելու հարցում ասել եմ հետևյալը. « որ վերաբերմունքի, պարզաբանեք, որ մարդը կարողանա պարզաբանի, որ, Դուք ադեկվատ խնդրում եմ ընկալեք իրականաթյունը … »:

Մնացած արտահայտությունները վերաբերում են նախագահողի կողմից մեզ արհամարելու գործընթացին, որի ընթացքում ես փորձում էի նախ հասկանալ արդյոք նա մեզ լսում է հետո փորձում էի ինչ-որ կերպ գրավել վերջինիս ուշադրությունը, որպեսզի հերթական անգամ առարկությամբ և հայտարարությամբ հանդես գամ: Դա դատական պրակտիկայում տարածված ձև է, որոշ փաստաբաններ ձեռք են բարձրացնում, ես օրինակ երբեմն հայացքով եմ հասկացնում նախագահողին որ հարց կամ ասելիք ունեմ (գրեթե միշտ նախագահող դատավորները ադեկվատ են վերաբերում այդ գործողություններին): Ամբողջ խնդիրն այն է, որ Ն.Բաղդասարյանը այն աստիճան կողմնակալ և նախատրամադրված, ավելի ճիշտ բացասաբար տրամադրված էր մեր նկատմամբ, որ բոլոր խոսքերն ու գործողությունները ընկալում էր ոչ ադեկվատ:

Դատավորը վերը նշված արտահայտությունների մի մասի կապակցությամբ կիրառել է նախազգուշացման տեսքով սանկցիա, սակայն հետագայում դրանք ներառել է նաև իր որոշման մեջ: «Դուք ստում եք» , «ես Ձեր խնդրանքին չեմ արձագնքում», «Ձեր խնդրնաքը չի բավարարվում», «դատարանի որոշման կարիքը չունենք», « մենք գնանք թե մնանք» արտահայտություններից հետո Ն.Բաղդասարյանը կիրառել է դատական սանկցիա նախազգուշացման տեսքով:

Վ.Գասպարիի և Տ.Եգորյանի նկատմամբ մի քանի անգամ կիրառել է դատական սանկցիա նախազգուշացման տեսքով, սակայն հարցերին պատասխանելու իրավունք և պարտականություն չունենալու պատճառաբանությամբ յուրաքանչյուր անգամ հրաժարվել է պարզաբանել և պատճառաբանել կայացվող որոշումները և այդպիսի պարզաբանումների պահանջները դիտարկել է նոր հիմք կամ հիմքեր հաջորդ նախազգուշացումները որպես դատական սանկցիա կիրառելու համար՝ մերկապարանոց հայտարարություններով համեմելով դրանք առ այն, որ իբր պաշտպանության կողմում հանդես եկողները չեն ենթարկվում դատարանի օրինական կարգադրություններին: Տ.Եգորյանի նկատմամբ Նելլի Բաղդասարյանը կիրառել է առավել խիստ սանկցիա՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություն հարուցելու որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատ դիմելու տեսքով այն բանից հետո, երբ վերջինս ի պատասխան դատավորի արտահայտությանն. «լավ չեք լսում» հակադարձեց պահանջելով իրեն լսել, որը Նելլի Բաղդասարյանի կողմից գնահատվեց որպես վիրավորանք: Այս արարքով Նելլի Բաղդասարյանը հստակ ցուցանում է, որ իր արտահայտությունը, որը հակադարձվել է վիրավորական է գնահատվել, սակայն իր կարծիքով թույլատրելի է փաստաբանի նկատմամբ սակայն՝ ոչ մի դեպքում դատավորի: Բացի դրանից, հիշյալ նիստի ընթացքում Նելլի Բաղդասարյանը հետևողականորեն արհամարհում էր Տ.Եգորյանին, անուշադրության մատնելով վերջինիս ցանկացած խոսք, և դիտավորյալ չլսելու տալով, անտեսելով վերջինիս հայտարարություն կամ առարկություն ներկայացնելու հնարավորություն ընձեռելու մասին կոչերը, հայտարարությունները, փորձում էր անհաղորդ կերպով իր խոսքը շարունակել՝ նույնիսկ չշրջվելով դեպի պաշտպանական կողմ: Նելլի Բաղդասարյանն այդ վարքագիծը որդեգրեց այն բանի համար, որ սրբագրի դեռևս 04.11.2015թ. Ձեր կողմից թույլ տրված սխալը (մեզ՝ Վ.Գասպարիի պաշտպաններիս, հեռացնելու մասին արձանագրային որոշում): Մասնավորապես, Նելլի Բաղդասարյանը, նիստերից մեկի ընթացքում ի պատասխան Դ.Գյուրջյանի հարցին հայտարարել էր, որ դատարանը մեզ չի հեռացրել, այլ Վ.Գասպարին է հրաժարվել մեզնից, ինչը սուտ

լինելուց բացի ուղղակի ծիծաղելի էր, քանի որ Վ.Գասպարին տարբեր նիստերի ընթացքում իրեն հրամցված հանրային պաշտպաններից հրաժարվելու հիմնավորում որպես բերել է արդեն իսկ երեք պաշտպան ունենալու հանգամանքը: Նելլի Բաղդասարյանը, փորձելով այդ սուտը ճշմարտության տեղ անցկացնել, բավական հաճախ հայտարարում էր, որ քանի որ Վ.Գասպարին հրաժարվել է մեզանից, մենք չենք հանդիսանում պաշտպան և պնդում էր, որ անհրաժեշտ է որ Վ.Գասպարին նորից հայտարարի, որ ցանկանում է որպեսզի մենք պաշտպանենք իր իրավունքները, որպեսզի դատարանը ճանաչի մեր իրավունքները և մեզ խոսքի իրավունք տրամադրի: Այս ամենը չափազանց մտահոգիչ և ապշեցնող էր, հատկապես դատական նիստը ունկնդրող ՁԼՄ-ների ներկայացուցիչների և հանրության համար, որոնց, ինչպես նաև մեզ համար այս ամենը աննկարագրելի ցնցում էր և հիասթափություն դատական համակարգից: Ապշանքն անասելի էր, լրագրողները դատական նիստից հետո բառեր չէին գտնում հարցադրումներ կատարելու համար, մենք բառեր չէինք գտնում պատասխաններ կամ մեկնաբանություններ տալու համար, դա ուղղակի ահավոր էր, անհավանական, անհավատալի, ապշեցնող, ցնցող, վրդովեցնող, անընդունելի, անթույլատրելի, պախարակելի: Էական եմ համարում նաև այն, որ այդպես էլ պարզ չի դառնում թե կոնկրետ որ արտահայտությունների համար է կիրառվել նախազգուշացում, իսկ որոնց համար միջնորդություն փաստաբանների պալատ ներկայացնելու տեսքով սանկցիա: Մասնավորապես՝ «լավ չեք լսում», «դատարանի որոշման կարիքը չունենք», «մենք գնանք թե մնանք», «Դուք ստում եք, դուք ստում եք», «ես Ձեր խնդրանքին չեմ արձագանքում» արտահայտությունները կատարվել են մինչև դատարանի կողմից քրեական դատավարության օրենսգրքի 314 [1] հոդվածով նախատեսված նախազգուշացման տեսքով սանկցիա կիրառելը, ուոնց կապակցությամբ կիրառվել է հիշյալ սանկցիան՝ նախազգուշացում: Այնուհետև «լսեք, ես Դատարանին եմ դիմել, ես սպասում եմ, որպեսզի ինձ խոսքի իրավունք տաք, Ձեզ պաշտպանական կողմ անհրաժեշտ է դատական նիստին, ուրեմն մենք դուրս կգանք ընդհանրապես դատարանի նիստերի դահլիճից, լսում եք մեզ, էս կողմում լսվումա Դուք լսում եք, Դուք տեսնում եք մեզ (08:42)» արտահայտությունների, ինչպես նաև «Դուք ադեկվատ խնդրում եմ ընկալեք իրականաթյունը» արտահայտությունների համար դատարանը ևս մեկ անգամ կիրառում է դատական սանկցի: Հիշյալ զարգացումների արդյունքում ես սկսում եմ պարզաբանումներ պահանջել դատարանից, ինչի կապակցությամբ դատավորը հայտնում է, որ եթե ես շարունակեմ իմ նկատմամբ կկիրառվի դատական սանկցիա, ինչին ի պատասխան ես հայտնում եմ, որ շարունակում եմ պարզաբանում

պահանջել ինչի կապակցությամբ դատարանը հայտարարում է, որ հեռանում է որոշում կայացնելու և կայացնում է ՀՀ փաստաբանների պալատ միջնորդություն ներկայացնելու որոշում, որով նշում է բալար այն արտահայտությունները, որոնց կապակցությամբ դատարանն արդենն կիրառել էր նախազգուշացման տեսքով դատական սանկցիա և որոնք դրանից հետո չէին կատարվել:>

Պատասխանողը հայտնեց, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիքերը բացակայում են:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող Տիգրան Եգորյանը փաստաբանի թիվ 1187 արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.-ին: 2011-2016թթ. ընկած ժամանակահատվածում, նրա նկատմամբ 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ /ավարտված վարույթ/ `04.02.2013թ-ին,06.06.2013թ-ին, 03.03.2016թ-ին և 03.10.2016թ-ին : Պալատի խորհրդի որոշման համաձայն նա ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության տույժի տեսակով , իսկ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար վարույթը և այլ վարույթները կարճվել են :

Այս պահին ոկա է նաև 5 ընթացիկ վարույթ:

7.Կարգապահական գործի փաստաթղթերը

Ուղեկցական գրությունը՝ 1 թերթից, կից՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Նելլի Բաղդասարյանի կողմից 26.02.2016թ. կայացրած՝ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին որոշումը /բնօրինակ՝ 2 թերթից/,

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի՝ <<Փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին>> 09.03.2016 թվականի թիվ 85-Ա/ԿԳ-16053 որոշումը /բնօրինակ՝ 4 թերթից/,

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 26.02.2016թ.-ին ընթացած դատական նիստի ձայնագրառումը պարունակող լազերային կրիչը /1 օրինակից/,

Կրիչը՝ /ձեռք բերված նախապատրաստողիս կողմից/, որում պարունակում է՝ https://www.youtube.com/watch?v=QUtrEiXh8DA,https://www.youtube.com/watch?v=Dx984H7e6CE

https://www.youtube.com/watch?v=_alMREJH50M կայքից բեռնված տեսանկարահանումը, կատարված ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, 26.02.2016 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում:

Պատասխանողի գրավոր բացատրությունը ներկայացված Խորհրդին :

8.Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Խորհուրդն ուսումնասիրելով վերը թվարկված փաստաթղթերը փաստում է , որ փաստաբան Տիգրան եգորյանը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. փետրվարի 26-ին, ժամը 16.30-ին նշանակված դատական նիստին մասնակցել է որպես ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան: Նշված դատական նիստին Դատարանը պաշտպան Տ. Եգորյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված սանկցիա՝ «նախազգուշացում»: Դատարանը նույն դատական նիստի ժամանակ կայացրել է նաև մեկ այլ «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. ամբաստանյալ Վ. Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Տիգրան Եգորյանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Դատարանի որոշումը 09.03.2016թ. թիվ 85-Ա/ԿԳ-16053 որոշմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջի խախտման հատկանիշով:

Խորհուրդն սույն կարգապահական գործի շրջանակում պետք է գնահատի փաստաբան Տիգրան Եգորյանի վարքագիծը, այն պահից սկսած, երբ Դատարանի կողմից 2016թ. փետրվարի 26-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1

հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված, փաստաբանի նկատմամբ կիրառեց սանկցիա՝ «նախազգուշացում» և մինչ այն պահը, երբ Դատարանը հեռացավ խորհրդակցական սենյակ Տիգրան Եգորյանի նկատմամբ մեկ այլ «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում կայացնելու, որով որոշել է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:

Մեջբերվում է վերը նշված դատական նիստի ձայնագրության նշված ժամանակահատվածից վերծանումները:

Դատարան Քանի որ Պարոն Եգորյանը չի ենթարկվում նախագահող դատարանի օրինական կարգադրություններին, այս պահին ներգրավվեց արդեն ամբաստանյալի շահերի պաշտպան և փորձում է վիրավորել դատական համակարգին, ուստի դատարանը ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքի 314 [1] պարոն Եգորյանի նկատմամբ կիրառում է դատական սանկցիա նախազգուշացում:

Եգորյան Ինչի կապակցությամբ նախազգուշացում:

Դատավոր Շնորհակալություն, նստեք խնդրեմ, կողմերին բացատրվում է, որ քրեական դատավարություն 93 հ-ը սահմանում է պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքներ:

Եգորյան Լսեք, ես Դատարանին եմ դիմել, ես սպասում եմ, որպեսզի ինձ խոսքի իրավունք տաք, Ձեզ պաշտպանական կողմ անհրաժեշտ է դատական նիստին, ուրեմն մենք դուրս կգանք ընդհանրապես դատարանի նիստերի դահլիճից, լսում եք մեզ, էս կողմում լսվումա Դուք լսում եք, Դուք տեսնում եք մեզ:

Դատավոր Նստեք խնդրեմ, Պարոն Գյուրջյան Դուք խնդրել էիք միջնորդության համար ժամնակ, խնդրեմ:

Եգորյան Դուք լսում եք մեզ:

Գասպարիի Դավիթ ջան ես հայտարարությունս չեմ վերջացրել:

Դավիթ

Իմ պաշտպանյալը հայտարարությունը չի վերջացրել, կվերջացնի նոր:

Դատավոր Ուրեմն հայտարարությունը պետք է լինի ըստ էության քրեական գործի հետ կապված առաջադրված մեղադրանքի շրջանակներում:

Եգորյան Իրավական հիմքը նշեք, կոնկրետ, որ նորմով առաջնորդվելով եք:

Դատավոր Շնորհակալություն, ուրեմն մեկ անգամ ևս նման վերաբերմունք դրսևորելու դեպքում Ձեր նկատմամբ կկիրառվի առավել խիստ դատական սանկցիա:

Եգորյան Ինչպիսի վերաբերմունք, պարզաբանեք:

Դատավոր Նախագահող դատավորի օրինական կարգադրություններին չենթարկվելու:

Եգորյան Որ կարգադրությունը:

Դատավոր Ուրեմն դատարանը Ձեզ իրավասու չէ որևէ պարզաբանում տալու, նստեք խնդրեմ, նիստը շարունակվում է:

Եգորյան Այսինքն, Դուք պարտավոր եք պարզաբանել, թե իմ նկատմամբ սանկցիա ինչի համար եք կիրառել:

Դատավոր Նստեք խնդրեմ:

Եգորյան Ես Ձեզ հետ խոսում եմ, ոնց նստեմ:

Դատավոր Նստեք խնդրեմ :

Եգորյան Ուրեմն ներկայացրեք, թե որ կարգադրությունը չի կատարվել, որպեսզի հասկանանք ինչի հիման վրա եք Դուք սանկցիա կիրառում:

Դատավոր Գասպարիի շնորհակալություն Ձեզ, Դուք կարող եք նստել, որպեսզի դատական նիստը կարողանանք շարունակել, նստեք խնդրեմ:

Դատավոր Պարոն ….. ինչ կարծիքի եք վերաբերմունքի հետ կապված:

Եգորյան Որ վերաբերմունքի, պարզաբանեք, որ մարդը կարողանա պարզաբանի, որ, Դուք ադեկվատ խնդրում եմ ընկալեք իրականաթյունը:

Դատավոր Դատարանը Ձեր նկատմամբ կիրառեց դատական սանկցիա:

Եգորյան Մի րոպե:

Դատավոր Եթե շարունակեք:

Եգորյան Շարունակում եմ ինչի համար կիրառեց, պատճառաբանությունը:

Դատավոր Շարունակում եք, ուրեմն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պարոն Եգորյանը չի ենթարկվում նախագահող դատավորի օրինական կարգադրություններին:

Եգորյան Բայց որ կարգադրույթուններին:

Դատավոր ԵՎ մեկ անգամ արդեն կիրառվեց դատական սանկցիա նախազգուշացում, դատարանը կիրառում է առավել խիստ դատական սանկցիա և համապատասխան գրությամբ դիմելու է փաստաբանների պալատի նախագահին Ձեր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննության առնելու համար:

Մեջբերված վերծանումներից կարելի է եզրակացնել , որ այն բանից հետո երբ Դատարանը Տիգրան Եգորյանի նկատմամբ կիրառում է դատական սանկցիա՝ «նախազգուշացում», փաստաբանը ամեն կերպ փորձում է Դատարանից ստանալ պարզաբանումներ և հիմնավորումներ իր նկատմաբ կիրառված դատական սանկցիայի կապակցությամբ: Պետք է արձանագրել, որ նիստի արձանագրությունից պարզվում է, որ Դատարանը ոչ միայն չի պարզաբանում իր որոշումը այլ հակառակը պաշտպանին կարգադրում է նտել և հայտարարում, որ Դատարանը իրավասու չէ որևէ պարզաբանում տալու այդ հարցում: Այս պարագայում պաշտպանի կողմից Դատարանի որոշման կապակցությամբ հիմնավորումներ և պարզաբանումներ ստանալու խնդրանքը, կամ պահանջը օրինական է, քանի որ «նախազգուշացում» դատական սանկցիան Դատարանը կայացնում է բանավոր

կարգով և այն անձը ում նկատմամբ նման որոշում է կայացվում լիովին իրավուք ունի պահանջել Դատարանից պարզաբանում որոշման կայացման հիմքի և պատճառաբանությունների վերաբերյալ: Չպետք է մոռանալ նաև այն , որ Քրեական Դատավարության օրենսգրքի 73 հոդվածի համաձայն՝ պաշտպանը սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝ հայտնել բացարկներ, հարուցել միջնորդություններ, առարկել դատարանի գործողությունների դեմ, բողոքարկել դատարանի գործողությունները և որոշումները, առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ և այլն:

Համաձայն փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից թույլ չի տրվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետ խախտում և նրա նկատմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ Դատարանի կողմից 2016թ. փետրվարի 26-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված, նրա նկատմամբ սանկցիա՝ «նախազգուշացում» կիրառելուց հետո մինչ այն պահը, երբ Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ Տիգրան Եգորյանի նկատմամբ մեկ այլ «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում կայացնելու, պատասխանողի վարքագծում առկա չէ այնպիսի գործողություններ որոնք հիմք կծառայեն արձանագրել նրա կողմից դատական նիստի բնականոն ընթացքի խոչընդոտելու, կամ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին կետի համաձայն ՝ Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8. հոդվածի 1-ին կետով և Պալատի փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի»* 4.1 ենթակետի *պահանջի խախտման հատկանիշներով վարույթը կարճել:
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան